ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

Մարզկենտրոն - Հրազդան

Քաղաքային համայնքներ - 7

Գյուղական Համայնքներ - 60

Բնակչությունը - 253700
քաղաքային - 137900
գյուղական - 115800



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԶԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԶԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Բովանդակություն

Ներածություն 2

Կոտայքի մարզի տնտեսական և ժողովրդագրական նկարագիրը 2

Արդյունաբերություն, սպասարկման ոլորտ և զբոսաշրջություն 2

Ֆինանսական բնագավառ 4

Տեղական ինքնակառավարման մարմինների և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեության համակարգում . . 5

Կրթություն 8

Մշակույթ և սպորտ 9

Սոցիալական ապահովություն 12

Առողջապահություն 13

Երեխաների իրավունքների պաշտպանություն 15

Հողաշինություն և հողօգտագործում 15

Գյուղատնտեսություն և բնապահպանություն 16

Քաղաքաշինություն 20

Տեղեկատվություն և հասարակայնության հետ կապեր 23

Ներքին աուդիտ 23

Փաստաթղթաշրջանառություն, քաղաքացիների ընդունելություն, ... 24

Կադրային աշխատանք. 24

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Տարվա ընթացքում Կոտայքի մարզում կազմակերպված աշխատանքները միտված են եղել մարզային տարբեր ոլորտներում իրականացվող գործընթացներին նոր որակներ և նոր լիցքեր հաղորդելուն, այդ գործընթացները ժամանակի պահանջներին ու տրամաբանությանը համահունչ կազմակերպելուն:

Մարզում իրականացված բոլոր նախաձեռնությունները բխել են ՀՀ Նախագահի և ՀՀ Կառավարության կողմից նախանշվող ծրագրային առաջնահերթություններից և հիմնական գերակայություն է համարվել մարզի շարունակական զարգացումն ու տարբեր ենթակառուցվածքների գործունեության կատարելագործումը:

Մարզպետարանի կողմից մշակվել է ՀՀ Կոտայքի մարզի զարգացման 2017-2025 թվականների ռազմավարությունը, որը ներառում է մարզային աշխատանքներն առավել համակողմանի կազմակերպելուն և հանրային տարբեր ոլորտներում դրական զարգացումներ ապահովելուն միտված հեռանկարային մոտեցումներն ու պատկերացումները:

Մշակվել են նաև մարզի համայնքների զարգացման 5-ամյա ծրագրերը, որոնց հիմքում դրված է համայնքային առօրյայում առավել հստակ, առավել տեսանելի և առավել ընդգրկուն աշխատանքներ կազմակերպելու, ինչպես նաև բնակչության կենսապայմանների բարելավման շեշտադրումներ:

Շարունակաբար իրականացվել են նաև մարզի տնտեսական միջավայրի աշխուժացման, մարզում ներդրումային նոր ծրագրերին խրախուսելուն ուղղված աշխատանքներ, որոնք պատշաճ հիմքեր են նախապատրաստել հաջորդ տարվա ընթացքում մարզում դրական տեղաշարժեր գրանցելու համար:

Մարզպետարանի կողմից շարունակվել է համագործակցությունը հանրապետական գործադիր մարմինների՝ մարզում գործող տարածքային ծառայությունների, մարզի համայնքների ղեկավարների աշխատակազմերի հետ և արդյունքում իրականացվել են համատեղ տարաբնույթ նախաձեռնություններ:

Տարեկան աշխատանքային ծրագրերի հիմնական առանցք է համարվել կատարված աշխատանքի հանրային իրազեկման ապահովումը, որի ուղղությամբ ձեռնարկված բոլոր քայլերն արտացոլված են մարզպետարանի պաշտոնական կայքէջի համապատասխան ենթաբաժիններում:

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Կոտայքի մարզը կազմավորվել է 1996 թվականին և ընդգրկում է Կոտայքի, Նաիրիի և Հրազդանի նախկին վարչական շրջանները: Կոտայքի մարզն ունի 67 համայնք, այդ թվում՝ 7 քաղաքային:

Կոտայքի մարզի բնակչության թվաքանակը 2016թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 253700 մարդ, որը հանրապետության ողջ բնակչության 8.5%-ն է, որից՝ 137900-ը քաղաքաբնակներ են (54.3%), 115800-ը՝ գյուղաբնակներ (45.7%):

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈԼՈՐՏ ԵՎ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

<u>Արդյունաբերություն</u>

2016թ. ընթացքում մարզի արտադրական ձեռնարկությունների կողմից թողարկվել է 84.6 մլրդ. դրամի արտադրանք: Այսպես, 2016թ. ընթացքում էլեկտրաէներգիայի արտադրության ծավալը կազմել

է 28.7 մլրդ դրամ: Հաշվետու ժամանակահատվածում մշակող արդյունաբերության արտադրանքի ծավալը կազմել է 52.9 մլրդ. դրամ:
Աճ է արձանագրվել սննդամթերքի (15.9%), խմիչքների (1.3%), դեղագործական ապրանքների (2.7%), պատրաստի մետաղե արտադրատեսակների (2 անգամ) արտադրություններում:
Հանքագործական արդյունաբերության ոլորտում հաշվետու ժամանակահատվածում աճ է գրանցվել. արտադրության ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել են 436.2 մլն. դրամի չափով կամ արտադրվել է 2.1 մլրդ. դրամի արտադրանք:

2016թ. ընթացքում արտադրանքի իրացումը ներքին շուկայում կազմել է 67.4 մլրդ. դրամ, իսկ արտաքին շուկայում՝ 17.8 մլրդ. դրամ, այդ թվում՝ ԱՊՀ երկրներ արտահանվել է 11.2 մլրդ. դրամի և այլ երկրներ՝ 6.6 մլրդ. դրամի արտադրանք:

մլն դրամ

	2015թ.	**2016թ.**	**շեղում** +/-	**%**
Թողարկված արտադրանքի ծավալը	92188.2	84604.2	-7584	91.8
Արտադրանքի իրացման ծավալը	91868.4	85211.6	-6656.8	92.8
Արտահանման ծավալը, որից՝	18686.6	17847.7	-838.9	95.5
ԱՊՀ երկրներ	10515.1	11229.8	714.7	106.8
այլ երկրներ	8171.5	6617.9	-1553.6	81.0

<u>Սպասարկման ոլորտ</u>

Մանրածախ առևտրի շրջանառության ծավալը հաշվետու ժամանակահատվածում կազմել է 46.6 մլրդ. դրամ, որը նախորդ տարվա համեմատ ավել է 11.2 մլրդ. դրամով կամ աճը կազմել է 31.6 %:

Իսկ բնակչությանը մատուցած ծառայությունների գումարը կազմել է 77.5 մլրդ. դրամ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 49.1 մլրդ. դրամի դիմաց կամ աճը կազմել է 57.8 %:

<u>Զբոսաշրջություն</u>

Զբոսաշրջությունը կարևոր տեղ է զբաղեցնում Կոտայքի մարզի տնտեսության մեջ: Մարզի զբոսաշրջության հիմնական կենտրոններն են՝ Ծաղկաձորի, Աղավնաձորի, Մարմարիկի, Հանքավանի, Աղվերանի, Արզնիի հանգստյան գոտիները, Գառնի, Գեղարդ, Բջնի պատմամշակութային վայրերը: Մարզում գործում են ավելի քան 75 հյուրանոցային և հանգստի կազմակերպման համալիրներ, զբոսաշրջության համար առկա են անհրաժեշտ ենթակառուցվածքներ: Ընդ որում տարեցտարի ընդլայնվում և նորացվում է հյուրանոցային և հանգստի կազմակերպման համալիրների ցանցը:
2016թ. ընթացքում մարզ այցելած զբոսաշրջիկների թիվը կազմել է ավելի քան 258 հազար մարդ նախորդ տարվա 236 հազարի դիմաց կամ աճը կազմել է 9.3 %:

Ղեկավարվելով ՀՀ օրենքներով և Կառավարության որոշումներով ու նորմատիվ այլ ակտերով՝ մարզպետարանը ապահովել է պետական բյուջեից հատկացված միջոցների տնօրինման և դրանց նպատակային օգտագործման հսկողության գործընթացը:

2016 թվականին սահմանված կարգով և ժամանակին իրականացվել է պետական բյուջեից մարզային ենթակայության կազմակերպություններին նախատեսված ծախսերի ֆինանսավորումը:

ՀՀ Կոտայքի մարզպետարանի 2016 թվականին բյուջեով նախատեսված 7 միլիարդ 363 միլիոն 753 հազար 700 դրամի դիմաց ծախսվել է 7 միլիարդ 335 միլիոն 322 հազար 800 դրամ: Կատարվել է 28 միլիոն 430 հազար 900 դրամի տնտեսում:

Մարզպետարանի աշխատակազմի պահպանման համար նախատեսված 521 միլիոն 339 հազար դրամից ծախսվել է 513 միլիոն 195 հազար դրամ, մնացած 8.1 միլիոն դրամը տարբեր հոդվածներով կատարված տնտեսման արդյունք է: Փաստացի ծախսը 2015 թվականի նույն ժամանակաշրջանի համեմատությամբ աճել է 8.5%-ով կամ մոտավորապես 4 միլիոն 300 հազար դրամով, որը հիմնականում աշխատավարձերի բարձրացման արդյունք է:

Հանրակրթական դպրոցների պահպանման համար նախատեսված գումարները իրացվել է 100%-ով:

Մշակութային միջոցառումների անցկացման համար հատկացված 2 միլիոն 400 հազար դրամը և ժողովրդական գործիքների ուսուցման ծրագրով նախատեսված 67 միլիոն 500 հազար դրամը ամբողջությամբ իրացվել են:

Մարզային ավտոճանապարհների պահպանման և շահագործման ծրագրով նախատեսված 89 միլիոն 300 հազար դրամից ծախսվել է 89 միլիոն դրամ նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի համեմատությամբ ծախսը ավելացել է 5 միլիոն դրամով կամ 5.6%-ով:

Հաշվետու տարում զգալի աշխատանք է կատարվել համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման ուղղությամբ: Նախատեսված 1 միլիարդ 850 մլն 141 հազար 300 դրամի դիմաց հավաքագրվել է շուրջ 1 միլիարդ 888 միլիոն 861 հազար 500 դրամի սեփական եկամուտ /հողի հարկ, գույքահար, տեղական տուրք, պետական տուրք և հողի ու գույքի վարձակալական վարձավճար/ կամ եկամուտների պլանը կատարվել է 102.1%-ով: Նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի համեմատությամբ ավել է հավաքագրվել շուրջ 39,5 միլիոն դրամ:

2016 թվականին համայքններին հատկացվել է 168 միլիոն դրամ սուբվենցիա՝ նվազագույն աշխատավարձի, էլեկտրաէներգիայի ծախսերը փոխհատուցելու նպատակով:

Ֆինանսական համահարթեցման սկզբունքով նախատեսված դոտացիան կազմել է 4 միլիարդ 135 միլիոն 293 հազար 300 դրամ, որը ամբողջությամբ իրացվել է:

Մարզի համայնքները և ենթակա հիմնարկները 2016թ. աշխատավարձի և սոցվճարների գծով պարտքեր չունեն:

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչությունը հաշվետու տարում իր գործունեությունը կազմակերպել է մարզպետարանի և վարչության կանոնադրության, աշխատանքային ծրագրերի և տրված հանձնարարականների համաձայն:

2016 թվականին 62 համայնքներում անցկացվել են հերթական ընտրություններ, որից 5-ում միայն համայնքի ղեկավարի, 43-ում համայնքի ղեկավարի և ավագանու ընտրություն, իսկ 17-ում միայն ավագանու:

2016 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսների ընթացքում մարզպետն այցելել է մարզի բոլոր համայնքներ, ուսումնական և առողջապահական կազմակերպություններ, որոնց արդյունքում լուծվել են մի շարք համայնքային խնդիրներ և հարցեր:

2016 թվականի ընթացքում վարչության կողմից նախապատրաստվել են մարզպետի 45 որոշումների նախագծեր:

Վարչությունը մասնակցել է մարզպետարանի կողմից ՀՀ կառավարության մի շարք որոշումների նախագծերի քննարկմանը և ներկայացրել առաջարկություններ:

Տեղական ինքնակառավարում

<u>Համայնքի ավագանու որոշումներ</u>

<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի համաձայն մարզի համայնքներում 2016 թվականի ընթացքում կայացել է ավագանու 862 նիստ, որոնց ընթացքում կայացվել է 3467 որոշումներ:

Մարզպետարանի այլ ստորաբաժանումների հետ համատեղ կատարվել է ավագանու որոշումների իրավական հսկողություն, որոնց արդյունքներով ոչ իրավաչափ որոշումների վերաբերյալ 218 գրություններ է ներկայացվել համայնքների ղեկավարներին: Ոչ իրավաչափ որոշումները համապատասխանեցվել են գործող օրենսդրության պահանջներին:

Համայնքապետարանների աշխատակազմերի քարտուղարներին և մասնագետներին պարբերաբար տրվել է մեթոդական խորհրդատվություն:

<u>Վարչական հսկողություն</u>

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015 թվականի դեկտեմբերի 29-ի <<Վարչական հսկողության 2016 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին>> N 1381-Ա հրամանի համաձայն նախատեսվել և իրականացվել է վարչական հսկողություն՝ 2013-2016 թթ գործունեության նկատմամբ մարզի 23 համայնքների ղեկավարների և ավագանիների լիազորությունների նկատմամբ:

Հսկողության արձանագրությունները սահմանված կարգով տրվել են համայնքների ղեկավարներին և ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն:

Կատարվել են վարչական հսկողության արդյունքների քննարկումներ:

Համայնքների կողմից ձեռնարկված միջոցառումների և կատարված աշխատանքների նկատմամբ իրականացվել է վերահսկողություն:

Վարչական հսկողության արդյունքներով արձանագրված խախտումների և թերությունների շտկման նպատակով ձեռնարկված միջոցառումների մասին տեղեկատվությունները ներկայացվել են ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն:

Վարչական հսկողության արդյունքները հրապարակվել են մարզպետարանի պաշտոնական ինտերնետային կայքում:

Առևտրի և ծառայությունների մատուցման բնագավառ

2016 թվականին համայնքներում իրականացվել է առևտրի և ծառայությունների ոլորտում տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունների իրականացման հսկողություն: Համայնքների ղեկավարների կողմից մարզպետարան ներկայացված եռամսյակային հաշվետվություններն ամփոփվել են և կիսամյակի կտրվածքով ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն:

Մարզի համայնքներում 2016 թվականի ընթացքում գործունեություն են իրականացրել 1689 առևտրի, 234 հանրային սննդի, 310 կենցաղային ծառայության օբյեկտներ: Ստուգումներ են կատարվել 640 առևտրի, 97 հանրային սննդի, 32 կենցաղային ծառայության օբյեկտներում: Արձանագրվել է 7 խախտում, նշանակվել է 270 հազ. դրամ տուգանք:

Ուսումնասիրություններից և վերլուծություններից հետևում է, որ առանց բացառության համայնքների ղեկավարները լիարժեք չեն իրականացնում օրենքով իրենց տրված լիազորությունները, և տարվա կտրվածքով ստուգվում են միայն գործող օբյեկտների 30-60 տոկոսը: Շատ համայնքներում էլ հսկողությունների իրականացումը կրել է ձևական բնույթ: Պատճառաբանությունը ազգաբնակչության սոցիալ-տնտեսական վիճակն է, որը սակայն ավելի շուտ տնտեսվարող սուբյեկտներին չնեղացնելու նպատակ է հետապնդում:

Առանձին դեպքերում, վարչական հսկողության շրջանակներում մարզպետարանի ներկայացուցիչների հետ համատեղ իրականացված ստուգումները, եթե անգամ տալիս են որոշակի արդյունք, ապա դրանից հետո համայնքներում նորից շարունակվում է ահետևողականությունը:

Խնդիրը բազմիցս քննարկվել է խորհրդակցությունների ընթացքում, սակայն համայնքների ղեկավարներն իրենց տրված լիազորություններն այս բնագավառում իրականացնում են ոչ լիարժեք:

Համայնքային ծառայություն

Համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկով մարզի համայնքապետարանների աշխատակազմերում հաստատվել է համայնքային ծառայության 553 պաշտոն, որոնցից զբաղեցված են 493-ը, թափուր են 60 հաստիք:

Համայնքային ծառայության թափուր պաշտոնների զբաղեցման համար հայտարարվել է 25 մրցույթ, կայացել են՝ 17-ը: Ատեստավորվել են 46, վերապատրաստվել 25 համայնքային ծառայողներ:

Կոտայքի մարզում համայնքային ծառայության թափուր պաշտոններն զբաղեցնելու համար հայտարարված մրցույթների և համայնքային ծառայողների ատեստավորումների արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունն ամփոփվել է և յուրաքանչյուր ամսին հաջորդող ամսի մինչև 5-ը ներկայացվել է ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն:

Համայնքապետարանների աշխատակազմերում առկա համայնքային ծառայության թափուր պաշտոններն օրենքով սահմանված մրցութային կարգով համալրելու նպատակով հայտարարված մրցույթների և համայնքային ծառայողների ատեստավորման օրերի ժամանակացույցերը յուրաքանչյուր ամիս ներկայացվել են ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, իսկ մրցույթների մասին հայտարարությունները տեղադրվել են մարզպետարանի ինտերնետային կայքում:

Հանրապետական գործադիր մարմինների համակարգում

Պաշտպանության բնագավառ

2016 թվականի զորակոչերը բարձր մակարդակով կազմակերպելու համար Կոտայքի մարզպետի կողմից կայացվել են 2016 թվականի ամառային զորակոչը կազմակերպելու և 2016 թվականին զորակոչային տեղամասերում կցագրում կատարելու մասին որոշումները:

2016 թվականին անցկացվել են մարզային զորակոչային հանձնաժողովի 2 նիստ:

Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների բնագավառ

Մարզպետի 29.12.2015թ. N 358-Ա որոշմամբ հաստատված <<ՀՀ Կոտայքի մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2016 թվականի հիմնական միջոցառումների պլանով>> նախատեսված միջոցառումներն ամբողջությամբ իրականացվել են:

Անցկացվել է 1 հրամանատարաշտաբային, 2 շտաբային, 1 ցուցադրական հատուկ տակտիկական, 21 հատուկ տակտիկական ուսումնավարժություն և 7 օբյեկտային վարժանք:

Մարզի բոլոր համայնքներում անցկացվել է շտաբային ուսումնավարժություն, որից 37-ը համայնքներևի կողմից, 30-ը մարզային փրկարարական վարչության կողմից:

Մարզպետարանի և մարզային փրկարարական վարչության կողմից քաղաքացիական պաշտպանության և ԱԻ աշխատակցի օրերի կապակցությամբ մարզի 7 դպրոցներում կազմակերպվել և անցկացվել են օբյեկտային վարժանքներ, 20 կազմակերպություններում՝ հատուկ տակտիկական ուսումնավարժություն, իսկ 10 ուսումնական հաստատություններում՝ դասախոսություններ:

Ազգային անվտանգության բնագավառ

Մարզուում իրականացվող կենտրոնական ու տեղական հասարակական-քաղաքական միջոցառումների նախաշեմին, հասարակական ու ազգային անվտանգության ապահովմանն ուղղված համատեղ միջոցառումները նպաստել են կանխատեսվող հասարակական-քաղաքական լարվածությունների կանխմանն ու իրադրության կայունացմանը:

Կանխատեսվող և իրականացված ահաբեկչական, դիվերսիոն ու վնասարարական ակցիաների իրավիճակներ մարզի տարածքում չի առաջացել:

Օրինախախտումների, պաշտոնական դիրքի չարաշահման, ֆինանսատնտեսական միջոցների ոչ նպատակային օգտագործման և այլ կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի արդյունքում ՀՀ ազգային անվտանգության ծառայության մարզային վարչության կողմից բարձրացված խնդիրների լուծման նկատմամբ մարզպետի և մարզային իշխանությունների կողմից դրսևորվել է հետևողականություն, ցուցաբերվել է օգնություն ու օժանդակություն:

Իրավապահ մարմինների բնագավառ

Իրավիճակային անհրաժեշտությունից ելնելով ՀՀ ոստիկանության տարածքային մարմիններին, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմիններին համակարգված և համագործակցված աշխատանքներ իրականացնելու նպատակով տրվել են համապատասխան հանձնարարականներ:

Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ պահպանվել է պատշաճ հասարակական կարգ և անվտանգություն՝ ապահովելով ընտրությունների բնականոն ընթացքը:

Հաշվետու ժամանակահատվածում արձանագրվել է զենքի և ռազմամթերքի ապօրինի շրջանառության 65 դեպք, նախորդ տարվա 55-ի դիմաց:

2016 թվականի ընթացքում արձանագրվել է բացահայտման տոկոսում հաշվվող հանցագործության 1341 դեպք (2015թ.-ին՝ 1369), որոնցից բացահայտվել են 1037-ը, բացահայտումը կազմել է 77.3%, նախորդ տարվա 74.2%-ի դիմաց:

Հայաստանի Հանրապետության ոստիկանության ճանապարհային ոստիկանության 2-րդ սպայական գումարտակի 3-րդ սպայական վաշտի կողմից մարզի վարչական տարածքում ճանապարհատրանսպորտային պատահարների քանակը 2016 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ

248 պատահար, 2015թ.-ին՝ 294, նվազել է 46-ով, զոհվել է 32 մարդ, 2015թ.-ին՝ 34, նվազել է 2-ով, վիրավորվել է 383 քաղաքացի, 2015թ.-ին 426 քաղաքացի, նվազել է 43-ով:

Արձանագրվել է ճանապարհային երթևեկության կանոնների 36941 վարչական իրավախախտում (2015թ.-ին՝ 49402), նախորդ տարվա համեմատ ավել է հայտնաբերվել 2461 խախտում, որից ոչ սթափ վիճակում տրանսպորտային միջոցներ վարելու պատճառով 409 խախտում (2015թ.-ին՝ 444):

2016 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ վարորդական իրավունքից զրկվել է 24 քաղաքացի (2015թ.-ին՝ 11):

Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության Կոտայքի տարածքային բաժանմունքներում 2016 թվականի ընթացքում հաշվառել են 7934 քաղաքացու, հաշվառումից հանել 2597 քաղաքացու, Հայաստանի Հանրապետության քաղաքացիության անձնագրեր է տրվել 28754 քաղաքացիների:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Մարզում գործում են մարզպետարանի ենթակայության 91 հանրակրթական ուսումնական հաստատություններ.

59-ը՝ միջնակարգ, 31-ը՝ հիմնական, 1-ը՝ հատուկ /օժանդակ/

ԿԳ նախարարության ենթակայության 13 հանրակրթական ուսումնական հաստատություններ.

11 ավագ դպրոց, 2 կրթահամալիր /Աբովյանի և <<Փոքր Մհեր>> /

6 պետական քոլեջ, 5 արհեստագործական ուսումնարան

1 ոչ պետական դպրոց /Նոր Գեղիի/

1 ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություն /Հրազդանի հումանիտար ինստիտուտ/:

2016-2017 ուսումնական տարում մարզային ենթակայության ուսումնական հաստատություններում սովորում են 31114 աշակերտներ, իսկ ՀՀ ԿԳ նախարարության ենթակայությամբ ուսումնական հաստատություններում՝ 3553 աշակերտներ: Ընդամենը մարզի դպրոցներում սովորում են 34667 աշակերտներ:

Առաջին դասարան են հաճախում 3889 աշակերտ:

Մարզի պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում աշխատում են 3070 ուսուցիչներ:

Մարզային ենթակայության ուսումնական հաստատություններից հիմնանորոգված են 38-ը, մասնակի վերանորոգվել են 27-ը, իսկ մնացած 26-ը վերանորոգման կարիք ունեն:

Մարզային ենթակայության ուսումնական հաստատություններում լոկալ ջեռուցմամբ ապահովված են 91 դպրոցներից 74-ը, իսկ 17-ը ջեռուցվում են էլեկտրական ջեռուցիչներով և վառարաններով:

Աբովյանի հատուկ /օժանդակ/ և Հրազդանի N11 հիմնական դպրոցի հատուկ ստորաբաժանումն ուսուցում է կազմակերպում մտավոր կամ ֆիզիկական զարգացման խնդիրներ ունեցող 60 աշակերտների համար: Տնային պայմաններում ուսուցում են ստանում 17 աշակերտներ:Ներառական կրթություն են իրականացվում մարզի 11 դպրոցներում: Աշակերտների թիվը այս պահին 112 է:

Մարզում գործում են 54 նախադպրոցական հաստատություններ, որոնցից 23-ը հիմնովին վերանորոգված են: Ձեռնարկված աշխատանքների արդյունքում 6395 երեխաներ հաճախում են նախադպրոցական ուսումնական հաստատություններ: Աղավնաձորի գյուղական համայնքի մանկապարտեզի շենքի շինարարությունը ընթացքի մեջ է, այն ամբողջությամբ վերակառուցվում է:

Մարզում գործում են 22 նախակրթարաններ, որտեղ ընդգրկված են 923 երեխաներ:

Մանկավարժական կադրերի թափուր աշխատատեղերը համալրվում են մրցութային կարգով:

Մրցույթներին մասնակից ուսուցիչ հավակնորդների համար ապահովվել են հավասար մրցակցային պայմաններ և աշխատանքի են նշանակվում բացառապես մասնագետներ:

Մարզի 39 ուսումնական հաստատություններում իրականացվում է <<Դպրոցական սնունդ>> ներդրումային ծրագիրը՝ ՀՀ կառավարության և ՄԱԿ-ի <<Պարենի համաշխարհային ծրագիր>> համագործակցությամբ: Այս ծրագրի արդյունքում տարրական դասարանների 6288 աշակերտներն ապահովված են ամենօրյա տաք սննդով:

ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ՍՊՈՐՏ

<u>Մշակույթ</u>

Մարզում գործում են 23 երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներ, 5 թանգարաններ, 2 թատրոններ, 3 մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ, 67 գրադարաններ, 52 մշակույթի տներ և ակումբներ, 1 պատկերասրահ, 2 երաժշտական և 1 գեղարվեստի ստուդիաներ;

Գեղարվեստական կրթության հաստատություններում սովորում են 4178 աշակերտներ, աշխատում են 471 մանկավարժներ:

Տարվա ընթացքում, մշակութային միջոցառումների մարզային ծրագրի համաձայն, կազմակերպվել և իրականացվել են ՀՀ պետական ու ազգային- եկեղեցական տոներին և հիշատակի օրերին, ժամանակակից արվեստի զարգացմանը, ժողովրդական ավանդույթների և ծեսերի պահպանմանը նվիրված միջոցառումներ՝ ուխտագնացություններ, փառատոներ, մրցույթներ, ցուցահանդեսներ:

Սփյուռքի երիտասարդների Հայաստան այցելությունների <<Արի տուն>> ծրագրի շրջանակներում մարզի մի շարք համայնքներում հյուրընկալվել են սփյուռքահայ երիտասարդներ, որոնց համար կազմակերպվել են մշակութային, ժամանցային միջոցառումներ և հայրենագիտական-ճանաչողական էքսկուրսիաներ:

Համաձայն Հայաստանի Հանրապետության անկախության 25-ամյակին նվիրված <<Իմ Հայաստան>> համահայկական փառատոնի 2016 թվականի միջոցառումների ծրագրի՝ մարզի մի շարք պարային համույթներ ելույթներ են ունեցել Հայաստանի և Արցախի համերգային սրահներում, դահլիճներում, այլ մշակութային օջախներում, բեմահարթակներում և բաց հրապարակներում:

Հուլիսի 25-ին մարզում անցկացվել է վերոնշյալ ծրագրով նախատեսված <<Պարարվեստի օրեր>> միջոցառումը: Աբովյան քաղաքում հյուրընկալվել և մարզի պարային համույթների մասնակցությամբ իրենց պարարվեստն են ներկայացրել Հայկական Սփյուռքից /Վրաստան, Էստոնիա, Ռուսաստանի Դաշնություն/ ժամանած հինգ պարային համույթներ:

Կազմակերպվել են հայ մշակույթի և արվեստի, հասարակական–քաղաքական ականավոր գործիչների հոբելյաններին նվիրված <<Մեր մեծերը>> խորագրով մի շարք միջոցառումներ՝ դասախոսություններ, զրույցներ, գրական-երաժշտական ցերեկույթներ, քննարկումներ, բաց դասեր:

Ձեռնարկվել են անհրաժեշտ միջոցներ պետական և համայնքային միջոցների, ինչպես նաև նվիրատվությունների հաշվին մարզի 67 գրադարանների ֆոնդերը գեղարվեստական և գիտամասնագիտական գրականությամբ համալրելու ուղությամբ:

Մարզի չորս գրադարանավարներ մասնակցել են <<Հայկական գրադարանային ասոցիացիա>> ՀԿ–ի և միջազգային կազմակերպությունների աջակցությամբ կազմակերպած վերապատրաստման դասընթացներին:

Հրազդանի և Աբովյանի թատրոնները բեմադրել են նոր ներկայացումներ և մասնակցել են մի շարք թատերական փառատոների:

<<Նախաբեմ>> կրթամշակութային ասոցիացիայի կողմից կազմակերպված <<Նոան հատիկ>> մանկապատանեկան թատերախմբերի ամենամյա փառատոնում Հրազդանի <<Արտավազդ>> երիտասարդական կենտրոնի թատերախումբը արժանացել է դափնեկրի կոչման:

Ամմունքի հանրապետական մանկապատանեկան 9-րդ մրցույթ- փառատոնի եզրափակիչ փուլում մարզի դպրոցականները արժանացել են մեկ՝ 2-րդ և երեք՝ խրախուսական մրցանակների: Մարզի ներկայացուցիչները տարբեր կարգի մրցանակներ են շահել նաև հեքիաթասացության և էպոսասացության, ինչպես նաև <<Երգը բարեկամության կամուրջ է>> ռուսական երգի 4-րդ մրցույթ-փառատոներում: <<Հայ ասպետ - 2016>> եթերաշրջանի հեռուստախաղի եզրափակիչ փուլում, ավագ և կրտսեր տարիքային խմբերում, հաղթողներ են ճանաչվել Աբովյանի N 4 ավագ և Հրազդանի N 11 հիմնական դպրոցների թիմերը:

Հայաստանի ազգային կինոկենտրոնի հետ համատեղ, <<Կինոաշուն>> ծրագրի շրջանակներում, Հրազդան, Չարենցավան և Աբովյան համայնքներում կազմակերպվել են հայկական հին ու նոր ֆիլմերի կինոդիտումներ:

Կազմակերպվել են երաժշտական և արվեստի դպրոցների սաների, <<Կոտայք-2016>> պարարվեստի և երգարվեստի մարզային մրցույթ-փառատոններ, ցուցահանդեսներ:

Շարունակվել է մարզի երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, լարային և փողային նվագարանների ուսուցման գծով ուսման վարձավճարի փոխհատուցման պետական ծրագրի իրականացումը: Մարզի 16 դպրոցներ 253 աշակերտի ուսուցման համար 2016 թվականին ստացել են 67484.2 մլն. դրամ: Վերահսկվում է ընդունելության և ավարտական քննությունների ընթացքը, մշակվում և նախարարություն է ներկայացվում դպրոցների տարեկան հաշվետվությունները:

<u>Սպորտ</u>

Մարզում գործում են 15 մանկապատանեկան մարզադպրոցներ, որոնցից 2-ը մարզային ենթակայության, 2-ը՝ <<Սևան գյուղական մարզական ընկերության>>, 7-ը՝ համայնքային և 4-ը՝ հանրապետական ենթակայության: Մարզադպրոցներում գործում են խմբեր հունահռոմեական և ազատ ոճի ըմբշամարտ, բոնցքամարտ, ձյուդո, սամբո, ծանրամարտ, դահուկային սպորտ, շախմատ, ֆուտբոլ, հանդբոլ, արևելյան մարտարվեստ մարզաձևերից: Մարզադպրոցներում և մարզական ակումբներում աշխատում են 134 մարզիչներ, պարապող սաների թիվը 5520 է:

Տարվա ընթացքում մարզի բոլոր միջնակարգ և հիմնական դպրոցները ստացել են <<Շախմատ>> առարկայի դասավանդման համար անհրաժեշտ մեթոդական ձեռնարկներ, դասագրքեր, աշխատանքային տետրեր: Շարունակվել է շախմատ առարկայի ուսուցիչների վերապատրաստման և լիցենզավորման գործընթացը: Եղվարդ և Բյուրեղավան քաղաքներում բացվել են Հայաստանի շախմատի ակադեմիայի մասնաճյուղեր:

Շարունակվում է Չարենցավանի համայնքային ենթակայության մանկապատանեկան մարզադպրոցի նոր շենքի կառուցումը:

Կազմակերպվել են բազմաթիվ մրցաշարեր՝ ՀՀ դպրոցականների 25-րդ մարզական խաղեր, ՀՀ <<Ազգային ժողովի գավաթի խաղարկության>> մրցումներ, ՀՀ դպրոցականների շախմատի օլիմպիադայի տարածաշրջանային և մարզային մրցումներ: Մարզպետի հովանու ներքո

կազմակերպվել և անցկացվել են 2016թ. շախմատի պատանեկան և տղամարդկանց մարզային առաջնությունները:

Մարզի ութ համայնքներում մարզպետարանի համակարգմամբ անցկացվել են <<Մարզական փառատոներ>>/Հանրապետական եզրափակիչ փուլում Բյորեղավան քաղաքը գրավել է երկրորդ տեղը/, նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության ռազմամարզական խաղեր, մարզի նախադպրոցական կրթական հաստատություններում անցկացվել են սպորտլանդիաներ, իրականացվել են ՀՀ նախագահի մրցանակի համար <<Լավագույն մարզական ընտանիք>> մրցույթի, <<Լավագույն մարզական համայնք>>, <<Լավագույն մարզական բակ>> ստուգատեսերի համայնքային և մարզային փուլերը:

<<Լավագույն մարզական ընտանիք>> մրցույթի մարզային փուլին մասնակցել են 72, համայնքային փուլերին՝ 196 ընտանիքներ: Մրցույթի եզրափակիչ փուլին մասնակցել են հաշմանդամություն ունեցող 3 մարզական ընտանիքներ;

Մարզը ընդհանուր թիմային հաշվարկով գրավել է երկրորդ տեղը՝ արժանանալով ՀՀ Նախագահի գավաթին:

ՀՀ Նախագահի մրցանակի համար <<Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ>> մրցույթի հանրապետական փուլին մասնակցել են 8 մարզիկներ:

Գեղաշենի միջնակարգ դպրոցի ֆուտբոլի հավաքականը Դպրոցականների մարզական խաղերում 2-րդ տարին անընդմեջ դարձել է հանրապետության չեմպիոն:

Մարզի սպորտսմենները արձանագրել են մեծ նվաճումներ պրոֆեսիոնալ առաջնություններում՝ Էմիլ Ամիրշատյանը/Հրազդան/ դարձել է բազկամարտի Եվրոպայի առաջնության չեմպիոն, Վաչիկ Վարդանյանը/Եղվարդ/ Սոֆիայում կայացած մարտական սամբոյի աշխարհի առաջնությունում դարձել է փոխչեմպիոն: Աննա Մկրտչյանը դարձել է սամբոյի Եվրոպայի երիտասարդական առաջնության փոխչեմպիոն, Աշխարհի առաջնությանը գրավել է չորրորդ տեղը: Քասախի ծանրամարտի մարզադպրոցի երեք սաներ Եվրոպայի պատանեկան ու երիտասարդական առաջնություններում գրավել են մրցանակային տեղեր:

Հաշվետու տարում կարևոր ուշադրություն է դարձվել երիտասարդության խնդիրներին առնչվող մարզային նշանակության ծրագրերի մշակմանը և իրականացմանը: Կազմակերպվել է << Բազե Կոտայք >> մարզային երիտասարդական հավաք, որին մասնակցել են մարզի 28 համայնքները ներկայացնող 18-30 տարեկան ավելի քան 200 երիտասարդներ:

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից անցկացվող <<Լավագույն երիտասարդական մայրաքաղաք>> -2017 մրցույթի հանրապետական փուլում հաղթող է ճանաչվել Չարենցավան համայնքը:

Տարվա ընթացքում երիտասարդական և ուսանողական կազմակերպությունների ներկայացուցիչների, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության ներկայացուցիչների մասնակցությամբ կազմակերպվել են քննարկումներ Հայաստանի Հանրապետության <<Երիտասարդական պետական քաղաքականության 2015-2019թթ. ռազմավարության>> ծրագրի կատարման ընթացքի վերաբերյալ:

	2015թ.	2016թ.	դինամիկան
• Նպաստառու ընտանիքներ -	9315	9461	146
• Կենսաթոշակառուներ -	40785	40830	45
• Գործազուրկներ -	7510	8491	981
• Փախստականներ -	11800	11800	---

2016թ. դեկտեմբերի դրությամբ մարզի 4 սոցիալական ծառայությունների տարածքային գործակալություններում հաշվառվել են 11940 ընտանիքներ, որից նպաստառու են 9461 ընտանիքներ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ 146-ով ավել: Սոցիալական աջակցության խորհուրդների առաջարկությամբ չորս եռամսյակներում հրատապ դրամական օգնություն է տրամադրվել 2009 ընտանիքի, որոնց կարիքավորության միավորը 30.00-ից ցածր է եղել:

Նպաստառու ընտանիքների թվի հաշվարկով աղքատության մակարդակը մարզում կազմում է շուրջ 21%, սակայն տարբեր հաշվարկներով աղքատության մակարդակը հասնում է մինչև 35 %, որից ծայրահեղ աղքատ են համարվում 2.5 %:

ԽՍՀՄ բանկերում ունեցած ավանդների փոխհատուցում է տրամադրվում մինչև 1931թ. դեկտեմբերի 31-ը ծնված անձանց և հաշմանդամ դարձած ազատամարտիկներին ու զինծառայողներին: Տարեսկզբից մինչև այժմ 312 ընտանիքի տրամադրվել է ավանդների փոխհատուցման գումար շուրջ 57.2 մլն.դրամ:

Ինտեգրված սոցիալական ծառայություններ

Չարենցավան և Եղվարդ քաղաքներում գործում են ինտեգրված սոցիալական ծառայությունները, որոնք ամբողջությամբ վերանորոգված են և ապահովված աշխատանքային ու կոմունալ բոլոր հարմարություններով:

Հրազդան և Աբովյան քաղաքներում ինտեգրված սոցիալական ծառայությունների տեղակայումը գտնվում է նախապատրաստական փուլում:

Դեկտեմբերի դրությամբ զբաղվածության տարածքային 4 կենտրոններում գրանցվել է 8491 գործազուրկ/6.4%/, որից 5738-ը կանայք: Նախորդ տարվա հետ համեմատած զբաղվածության կենտրոններում գրանցվել են 981-ով ավելի գործազուրկներ/պատճառը սեզոնային զբաղվածության խթանման ծրագրի մասնակիցների հաշվառվումը ԶՏԿ-ում/:

Տնտեսապես ակտիվ բնակչությունը մարզում հաշվարկվում է շուրջ 125 հազ.մարդ, չգրանցված գործազրկությունը կազմում է 23 % /28750մարդ/:

<<Վարձատրվող հասարակական աշխատանքներ>> ծրագրերի իրականացման համար 2016թ. մարզին տրամադրվել էր 3մլն.դրամ գումար, որը մարզպետի որոշմամբ հատկացվել է Հրազդան և Աբովյան համայնքներին: 3 ամիս ժամանակավոր աշխատատեղերով ապահովվել են 12 մարդ:

Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրման ծրագրին մասնակցել են մարզի 34 համայնքների 1150 շահառուներ: 2016թ. ծրագրի իրականացման համար նախատեսված էր շուրջ 130 մլն.դրամ:

2003-2016թ. բնակարանային ապահովման նպատակով աջակցություն են ստացել մարզի զոհված և հաշմանդամ դարձած 234 անապահով զինծառայողների ընտանիքներ: 2016թ. ՀՀ պաշտպանության

նախարարության կողմից 7 ընտանիք աջակցություն են ստացել 26մլն. դրամ գումար և 10 ընտանիք մերժվել են կարիքավոր չլինելու պատճառով: Դեռևս բնակարանի բարելավման կարիք ունեն 217 զոհված/78/ ու վիրավոր/139/ ազատամարտիկների ընտանիքներ:

2003թ. օգոստոսի 1-ի դրությամբ ՀՀ ՏԿՆ Միգրացիոն պետական ծառայության կողմից հաշվառված առաջնահերթ բնակարանի կարիք ունեցողների թիվը – 551 փախստական ընտանիք էին, որոնք ընդգրկվել են <Բնակարանների գնման վկայագրերի տրամադրման> ծրագրում:

2006-2009թ. ընթացքում բնակարանի գնման վկայագիր է տրամադրվել 426 ընտանիքի, որից բնակարան են ձեռք բերել 318 ընտանիքներ:

2016թ. դեկտեմբերի դրությամբ բնակարանի կարիք ունեն ժամանակավոր կացարաններում բնակվող 95 փախստական ընտանիքներ:

Մարզում գործում է <Առաքելություն Հայաստան> բարեգործական հասարակական կազմակերպությունը, որը միայնակ տարեցների և ծայրահեղ աղքատ ընտանիքների համար տրամադրում է անվճար սնունդ /145 շահառու/ և իրականացնում է սոցիալական սպասարկում /410 շահառու/:

Աբովյան քաղաքում գործում է <Սաթենիկ> բարեգործական հասարակական կազմակերպություն տուն-ինտերնատը, որի խնամքի տակ են 36 միայնակ տարեցներ:

<<Դպրոցականների ամառային հանգստի կազմակերպում>> ծրագրով մարզում գործում է 5 մանկապատանեկան ճամբարներ, որտեղ իրենց ամառային հանգիստն են անցկացրել զոհված, վիրավոր ազատամարտիկների և կարիքավոր ընտանիքների 4500 երեխաներ՝ երեք հերթափոխով:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Մարզի առողջապահական հաստատությունները ներկայացված են 40 ընկերություններով, որոնցից 35-ը 100 տոկոս պետական բաժնեմասով /բաժնետոմսերի կառավարման լիազորությունները տրված են ՀՀ Կոտայքի մարզպետին/՝ այդ թվում՝

4 բժշկական կենտրոն /Հրազդան, Աբովյան, Չարենցավան, Նաիրի/,
1ծննդատուն/Աբովյան/,
1 քաղաքային պոլիկլինիկա /Նոր Հաճն/,
1 մարզային արյան բանկ /Հրազդան/,
2 առողջության կենտրոն /Գառնի, Արգել/,

26 առողջության առաջնային պահպանման կենտրոններ, մնացած 5 ընկերությունների բաժնետոմսերը սեփականության իրավունքով անհատույց հանձնվել են համայնքներին /Մեղրաձոր, Բյուրեղավան, Բուժական, Լեռնանիստ, Առինջ/:

Մարզի առողջապահության համակարգի հիվանդանոցային ծառայության մահճակալային ֆոնդը 253 է, որից

Թերապևտիկ պրոֆիլի՝ 73,
Վիրաբուժական՝ 58,
Ինֆեկցիոն՝ 22,
Մանկաբարձագինեկոլոգիական՝ 94,
Վերակենդանացման՝ 6:

Առողջապահական համակարգում աշխատողների թիվը 2016 թվականի տարեվերջին կազմել է 1680, որից բժիշկներ՝ 403, միջին բուժանձնակազմ՝ 800:

Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում մարզի առողջապահական ընկերությունների ֆինանսավորման հաստատված ծավալը 2016 թվականին կազմել է 3 մլրդ 30 մլն դրամ (2015թ. 3 մլրդ դրամ), որից արտահիվանդանոցային ծառայությունների ծրագրերով՝ 1 մլրդ 986 մլն դրամ (2015թ. 1 մլրդ 987 մլն դրամ) և հիվանդանոցային ծառայությունների ծրագրերով 1 մլրդ 44 մլն դրամ (2015թ. 1 մլրդ 30 մլն դրամ):

2016 թվականի ընթացքում մարզի բուժհաստատություններում հիվանդանոցային բուժօգնություն են ստացել 12 079 անձինք (2015թ.- 11 935), որոնցից 10 360-ը պետական պատվերի շրջանակներում և 1 619-ը վճարովի սկզբունքներով:

Հաշվետու ժամանակաշրջանում շաքարային դիաբետ, էպիլեպսիա, պարբերական հիվանդություն և հոգեկան և այլն հիվանդություններով տառապող անձանց տրամադրվել է շուրջ 168մլն. դրամի (2015թ.-77.3մլն դրամ) դեղորայք:

2016 թվականի ընթացքում մարզի ծննդատներում գրանցվել է 2375 ծնունդ (2015թ՝ 2490 ծնունդ):

Հաշվետու ժամանակահատվածում մարզի առողջապահական ընկերությունները դեբետորական և կրեդիտորական պարտքեր չունեն, աշխատավարձի պարտքեր չեն գոյացել:

ՀՀ Կոտայքի մարզի և ԼՂՀ Շահումյանի շրջանի միջև փոխհամագործակցության հուշագրի շրջանակներում մարզի առաջատար բժիշկ-մասնագետների կողմից կազմակերպվել է հիվանդանոցային բուժման կարիք ունեցող անձանց անվճար բուժումը և հղիների ծննդալուծումը մարզի բուժհաստատություններում: Օտարերկրյա քաղաքացի հանդիսացող, սակայն ՀՀ Կոտայքի մարզում մշտապես/փաստացի բնակվող կանանց սահմանված կարգին համաձայն տրամադրվել է ծննդօգնության հավաստագրեր: Մարզից դուրս մասնագիտացված բժշկական օգնություն ստանալու համար մարզպետի միջնորդությամբ ուղեգրումների թիվը կազմել է 20 (2015թ.՝ 15):

Հաշվետու տարում անվճար հիվանդանոցային բուժման նպատակով տրամադրվել է մարզպետի 67 ուղեգիր (2015թ.՝ 58), ԼՂՀ-ի կամ այլ երկրի հայազգի քաղաքացիների մարզպետի միջնորդագրերով տրամադրվել է 14 ծննդօգնության պետական հավաստագիր (2015թ.՝ 8):

2016թ. ընթացքում Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի հրամանով հաստատված բաշխացուցակի համաձայն պետության կողմից երաշխավորված առողջարանային-վերականգնողական բուժում են ստացել 128 անձիք (2015թ. 161 անձ):

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից 2016 թվականին <<Քաղսիի ԱԱՊԿ>> ՊՈԱԿ-ի շենքի կառուցման նպատակով տրամադրվել է 56 մլն դրամ, իսկ Քաղսի համայնքի բյուջեից՝ 6 մլն դրամ: Շենքի կառուցման շինարարական աշխատանքներն ավարտվել են և գույքի ձեռքբերման հայտ է ներկայացվել Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամ:

2016 թվականի ընթացքում ՀՀ Կոտայքի մարզպետարանի կողմից մարզպետարանի ենթակայության առողջապահական ընկերությունների գործադիր տնօրենների թափուր պաշտոնների համար սահմանված կարգի համաձայն անցկացվել են մրցույթներ: Կայացել է տնօրենի ընտրության 1 մրցույթ: Նշանակվել է 1 տնօրեն (<<Զովունիի ԱԱՊԿ>> ՊՈԱԿ): Ընկերություններում բժշկական կադրերով ապահովումը նույնպես իրականացվել է մրցութային կարգով: Ընթացիկ տարում բժշկական թափուր հաստիքների համալրման համար հայտարարվել են 8 մրցույթներ, որոնց արդյունքում համակարգը համալրվել է երիտասարդ մասնագետներով:

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Այս պահին Կոտայքի մարզի առանց ծնողական խնամքի մնացած (ԱԾԽՄ) երեխաների և ԱԾԽՄ երեխաների թվին պատկանող անձանց մարզային շտեմարաններով հաշվառված են 115 ԱԾԽՄ երեխաներ և ԱԾԽՄ երեխաների թվին պատկանող անձինք, նրանցից հաշվետու տարում հաշվառվել են 8-ը, հաշվառումից հանվել են 7-ը: Համապատասխան շտեմարաններում այժմ առկա են 78 ծնողազուրկ երեխաների և 37 ԱԾԽՄ երեխաների թվին պատկանող անձանց տվյալներ:

Մարզի երեք խնամատար ընտանիքներում խնամվում են 4 ԱԾԽՄ երեխաներ:

Մանկատուն է տեղավորվել 4 երեխա, կենսաբանական ընտանիք է վերադարձվել 4 երեխա:

Մուրացիկ, թափառաշրջիկ, իրավախախտ և հանցագործություն կատարած անչափահասների մարզային շտեմարանում ոստիկանության անչափահասների գործերով (ԱԳ) բաժանմունքներից ստացված տվյալների հիման վրա հաշվետու տարում հաշվառվել են 31 անչափահասներ, հաշվառումից հանվել՝ 40-ը: Այս պահին հաշվառման մեջ են գտնվում 29 իրավախախտ անչափահասներ:

Արդյունավետ աշխատանք է տարվել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հայտնաբերման, կրթության իրավունքի վերականգնման և հատուկ կարիքի գնահատման առումով: 2016թ.-ի ընթացում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 101 երեխայի տրվել է վկայագիր:

Մարզում իրականացվել են կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների սոցիալական կարիքների գնահատման, երեխաների սոցիալ-հոգեբանական անհատական վերականգնողական ծրագրերի կազմման և իրականացման աշխատանքներ: 2016թ. ընթացքում երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն ՊՈԱԿ-ներ են տեղավորվել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված սոցիալապես անապահով ընտանիքների 13 երեխաներ և 8 երեխաներ դուրս են գրվել հաստատություններից: Այժմ աշխատանք է տարվում բեռնաթափման ծրագրի շրջանակներում անհատական վերականգնողական ծրագրերի իրականացման միջոցով կյանքի դժվարին իրավիճակում հայտնված (ԿԴԻՀ) երեխաներին կենսաբանական ընտանիք վերադարձնելու ուղղությամբ:

Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների հաշվառման <<Մանուկ>> տեղեկատվական համակարգ 2011-2016թթ. ընթացքում մուտքագրվել է մարզի 714 երեխաների և երեխա որդեգրել ցանկացող քաղաքացիների տվյալներ, նրանցից՝ 93-ը այս տարում:

Մարզում բնակվող 5 դիմումատու քաղաքացիներ հաշվառվել են՝ որպես երեխա որդեգրել ցանկացող անձինք և մարզում բնակվող 3 դիմումատու քաղաքացիներ հաշվառվել են՝ որպես խնամատար ծնող դառնալու թեկնածուներ:

2016թ. ընթացքում Երեխաների խնամքի և պաշտպանության հաստատություններ՝ Երևանի <<Ջատիկ>> երեխաների աջակցության կենտրոն տեղավորվել են կյանքի դժվարին իրավիճակում հայտնված՝ 8 երեխաներ, իսկ ՀՕՖ-ի <<Երեխաների աջակցության հիմնադրամ>> կենտրոն՝ 1 երեխա:

ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

2016թ. հողային հաշվեկշռի համաձայն մարզում առկա են 154584,3 հա գյուղատնտեսական նշանակության հողատեսքեր, որոնք կազմում են հանրապետության նմանատիպ հողերի 7,7 տոկոսը, այդ թվում՝ վարելահողեր՝ 37708,6 հա,բազմամյա տնկարկներ՝ 2854,7 հա, խոտհարքներ՝ 11256,9 հա, արոտներ՝ 78933,3 հա: Նշված տարածքներից պետական և համայնքային սեփականություն են համարվում 7634,4 հա վարելահող, 2900 հա խոտհարք, 82,2 հա բազմամյա տնկարկ և 75842 հա արոտ:

Մարզի համայնքներում հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողություն սահմանելու նպատակով մեր կողմից ընթացիկ ստուգումներ են իրականացվել մարզի 23 համայնքներում: Միաժամանակ՝ ս/թ մայիս-հունիս ամիսներին մարզպետարանի հողաշինության բաժնում տեսչական ստուգումներ են կատարվել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի գեոդեզիայի և հողային պետական տեսչության կողմից, որի արդյունքում բաժնի աշխատանքներում թերություններ և խախտումներ չեն հայտնաբերվել:

Համադրման նպատակով տեսչությունը ուսումնասիրություններ է իրականացրել մարզի Բուժական, Ձորաղբյուր, Նուռնուս, Նոր Գյուղ, Արագյուղ, Գեղաշեն, Կոտայք, Քաղսի, Ֆանտան և Պռոշյան համայնքներում:

ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1918-Ն որոշմամբ սահմանված կարգի համապատասխան համայնքների ղեկավարների մասնակցությամբ մարզային հանձնաժողովում քննարկվել և ՀՀ վարչապետի 13.08.2001թ. թիվ 599 որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողով ենք ներկայացրել թվով 36 միավոր հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու նպատակով կազմված հողաշինարարական գործերը, որոնցից 35 միավորի վերաբերյալ ստացվել են դրական եզրակացություններ:

ՀՀ կառավարության 23.07.2015թ. թիվ 828-Ն որոշմամբ սահմանված կարգով հաստատված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթեր չունեցող համայնքներից ստացվել են թվով 26 միավոր հողամասերի գործառնական նշանակության փոփոխության առաջարկություններ, որոնցից 23-ը ստացել են մարզպետի համաձայնությունը և դրանց սահմանված կարգով տրվել է համապատասխան ընթացք, իսկ 3 առաջարկներ վերադարձվել են լրամշակման՝ դրանցում առկա թերությունները վերացնելու նպատակով:

2016 թվականի ընթացքում ՀՀ կառավարության 17.09.2009թ. թիվ 1066-Ն որոշմամբ սահմանված կարգի համաձայն մարզային համապատասխան հանձնաժողովում քննարկվել են մարզի Նոր Գյուղ համայնքում գտնվող 4 միավոր գյուղատնտեսական բարձրարժեք հողատեսքերը ավելի ցածր արժեքի փոխանցելու վերաբերյալ առաջարկությունը և բոլորի վերաբերյալ տրվել է դրական եզրակացություն:

2016թ. ընթացքում բաժինը ստացել և սահմանված կարգով ընթացք է տրվել թվով 1042 գրությունների և նամակների, որից 80-ը քաղաքացիներից:

Մարզային հողային պետական տեսչության առաջնահերթ նպատակն ենք համարում հողային օրենսդրության պահանջների խախտումների կանխարգելումը, համայնքների ղեկավարներին մեթոդական աջակցություն ցուցաբերելը, ինչպես նաև հայտնաբերված խախտումների նկատմամբ խիստ վերաբերմունք դրսևորելը:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Մարզում ձևավորվել և գործում են 32479 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններ: Մարզի հողային հաշվեկշիռը հետևյալն է՝ գյուղ. նշանակության հողեր՝ 154622.1 հեկտար, այդ թվում վարելահողեր՝ 37750.4 հեկտար, բազմամյա տնկարկներ՝ 2779.6 հեկտար, խոտհարք՝ 11257.0 հեկտար, արոտներ՝ 78922.0 հեկտար այլ հողտեսքեր՝ 23843.1 հեկտար: 2016թ. բերքի տակ կատարվել է 19279.2 հեկտար գյուղատնտեսական մշակաբույսերի ցանք /որից՝ աշնանացան- 6639 հա, գարնանացան- 12640.2 հա/ կամ օգտագործվել է վարելահողերի 51.2 տոկոսը նախորդ տարվա 47.7 տոկոսի դիմաց: Նախորդ տարվա համեմատ ընդհանուր ցանքատարածություններն ավելացել են 1259.2 հեկտարով:

Հիմնական գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները 2015-2016թթ.

Մշակաբույսի անվանումը	տարածությունը հա			
	2016թ	2015թ	2016թ. 2015թ-ի նկատմամբ +/-	2016թ. 2015թ-ի նկատմամբ %
ընդամենը մարզում *այդ թվում՝*	19279.2	18020	+1259.2	107.1
Հացահատիկ և ընդեղեն	13670.7	12618.7	+1052	108.3
կարտոֆիլ	923	850	+73	108.5
բանջար	1264	1164	+100	108.5
տեխն. մշակաբույսեր	45	49	-4	91.8
կերային մշակաբույսեր	3361.5	3300	+61.5	101.8

2016թ.-ի գարնանացանի համար գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնգանի արտադրության զարգացման ծրագրի շրջանակներում համայնքների 559 շահառուների կողմից վճարվել և ձեռք է բերվել 144.2 տ. գարնանացան գարու, 3 տ. առվույտի, սերմացուներ, որոնցով կատարվել է համապատասխանաբար 721 հա գարու, 120 հա առվույտի ցանք (պահանջարկը բավարարվել է):

Պետական աջակցության ծրագրերով 2016թ.-ին մարզին հատկացվել և ներկրվել է.

ազոտական պարարտանյութ – 1760 տոննա (ներկրվել է 1734.5 տոննա, հավաքագրվել է 208.1 մլն. դրամ, պարտք չկա)

կալիումական պարարտանյութ – 47.7 տոննա (ներկրվել է 34.95 տոննա – հավաքագրվել է 4.9 մլն. դրամ, պարտք չկա)

ֆոսֆորական պարարտանյութ – 58.4 տոննա (ներկրվել է 32.75 տոննա – հավաքագրվել է 4.6 մլն դրամ, պարտք չկա)

դիզելային վառելանյութ – 292000 լիտր դիզ. վառելանյութ (ներկրվել է 186461 լիտր, պարտք չկա):

Գյուղացիական տնտեսությունների կողմից ներկայացված վճարունակ պահանջարկն ամբողջությամբ բավարարվել է, ծրագրից օգտվել են մարզի 57 համայնքների շուրջ 6552 շահառուներ,

Եթե երկու բառով գյուղատնտեսական տարին բնութագրելու լինենք, ապա այն կարելի է համարել բարենպաստ, մասնավորապես՝ հացահատիկի արտադրության բնագավառում: Հաշվետու տարում ցանքատարածությունների աճին զուգընթաց արձանագրվել է հիմնական գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության աճ /օպերատիվ տվյալներով/: Արտադրվել է 35695 տոննա հացահատիկ / միջին բերքը կազմել է 26.1ց/հա/, կարտոֆիլ 19450 տոննա /միջին բերքը կազմել է 210 ց/հա/, բանջար 25670 տոննա/ միջին բերքը կազմել է 201ց/հա/, պտուղ 18950 տոննա /միջին բերքը կազմել է 48.3 ց/հա/: Կուտակվել է շուրջ 60000 տոննա խոտ, 9000 տոննա ծղոտ:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության համապատասխան ծառայությունների կողմից իրականացված մոնիթորինգի արդյունքում գարնանը մարզի 19 համայնքներին հատկացվել է 301 կգ <<Ռոդիֆակում- Ս>> մկնասպան թունանյութ. 3760 հա-ի վրա կատարվել են պայքարի աշխատանքներ մկնանման կրծողների դեմ, իսկ աշնանը մարզի 27 համայնքներին հատկացվել է 385.44 կգ <<Ռոդիֆակում- Ս >> մկնասպան թունանյութ. 4818 հա-ի վրա կատարվել են պայքարի աշխատանքներ մկնանման կրծողների դեմ:

Մարզում գյուղատնտեսության կարևոր ճյուղերից է անասնապահությունը: Այստեղ կենտրոնացված է հանրապետության խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակի շուրջ 8.6%-ը (59.6 հազար

գլուխ խ.ե.կ., որից 27.0 հազարը՝ կովեր), ոչխարների և այծերի՝ 6.1%-ը (45.6հազար գլուխ) և խոզերի՝ 10.4%-ը (20.3 հազար գլուխ):

2016 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին իրացվել է 6.1 հազար տոննա միս (կենդանի զանգվածով), աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կազմել է 6.3 տոկոս: Արտադրվել է 59.3 հազար տոննա կաթ, աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կազմել է 2.8 տոկոս և 101.2 մլն. հատ ձու, աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կազմել է 1.7 տոկոս:

Լուրջ առաջընթաց կա մարզում գործող անասնապահական մթերքների արտադրության վերամշակմամբ զբաղվող ձեռնարկությունների գործունեության բնագավառում, որոնց տեխնիկական հագեցվածությունը տարեցտարի ավելանում և համապատասխանեցվում է միջազգային ստանդարտներին: Արտադրանքի աճի հետ մեկտեղ զգալի աշխատանքներ են տարվել որակյալ և մրցունակ ապրանքների արտադրության ուղղությամբ՝ մարզի մի շարք ընկերությունների որոշ ապրանքատեսակներ արտահանում և հաջողությամբ իրացնում են արտերկրում:

Մարզում դրական տեղաշարժերից առանձապես կարևորվում է փակ գրունտի բանջարեղենի արտադրության ավելացումը, ընդհանուր առմամբ ջերմոցների տարածքը 2016 թվականին կազմել է 61 հա, որից բանջարեղենի արտադրություն՝ 22 հա, ծաղկի արտադրություն՝ 39 հա /Գողթ, Զորաղբյուր, Արամուս, Ակունք, Նոր Գեղի համայնքներում/:

«Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի շրջանակներում մարզի 4 համայնքներում (Սոլակ, Լեռնանիստ, Ակունք, Գեղաշեն) իրականացվել են արոտների ջրարբիացման աշխատանքներ /274 մլն. 300 հազար դրամ արժողությամբ/, կառուցվել է 12760 գծ. մետր ջրագիծ, 11 խմոց, տեղադրվել է 6 հատ ջրի տարա, ջրարբիացվել է շուրջ 6700 հա արոտավայր: Նշված համայնքներին հատկացվել է 28 միավոր գյուղատնտեսական տեխնիկա /56մլն.552.9 հազար դրամ արժողությամբ/, այդ թվում՝ ձեռքի խոտհնձիչ 7 հատ, հակավորող մեքենա 1 հատ, տրակտորային խոտհնձիչ 2 հատ, անիվավոր տրակտոր <<Բելոռուս>> մակնիշի 4 հատ, գութան 4 հատ, շարքացան 1 հատ, խոտի փոցխ 9 հատ:

Չնայած մարզում հաշվառված է 826 տրակտոր, 83 հացահատիկահավաք կոմբայն, 351 տրակ-տորային կցասայլ, 120 տրակտորային խոտհնձիչ, 32 կերահավաք կոմբայն, 133 հավաքիչ-մամլիչ և այլ գյուղատնտեսական տեխնիկա, սակայն դրանց սարքինության մակարդակը միջինը կազմում է շուրջ 85.5%՝ հանրապետական միջինի՝ 82.5%-ի համեմատ:

2016 թվականին մարզ ներկրված պարարտանյութերի, սերմերի և դիզ.վառելիքի գումարները ամբողջությամբ հավաքագրվել և մուծվել են մատակարարների նպատակային հաշվեհամարներին: Ընթացիկ տարում կատարվել է շուրջ 5000 հա աշնանացանի ցանք:

2017թ. գյուղատնտեսական տարվա նախապատրաստական աշխատանքների իրականացման նպատակով մարզի բոլոր համայնքներից հավաքագրվում են հայտեր պարարտանյութերի, սերմացուների պահանջարկի վերաբերյալ, որն ամփոփ ձևով կներկայացվի ՀՀ գյուղատնտեսության նախարարություն:

<u>Բնապահպանություն</u>

Բնապահպանական առումով մարզում առաջնային խնդիր են մնում թափոնների տեղադրման, աղբահանության և աղբավայրերի չկանոնակարգված օգտագործման, ինչպես նաև միջպետական և հանրապետական ճանապարհամերձ տարածքներում սանիտարական մաքրման հարցերը: Մարզում կան 4 խոշոր աղբավայրեր, որոնք շահագործվում են Հրազդան, Աբովյան, Եղվարդ, Չարենցավան համայնքների կողմից:

Ընթացքի մեջ է <<Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ կենցաղային թափոնների կառավարում>> ծրագրով աղբավայրի նախագծման աշխատանքները: Նախատեսվում է Հայաստանում կառուցել եվրոպական չափանիշներին համապատասխան առաջին տարածաշրջանային աղբավայրը, որը տեղակայված կլինի մարզի Հրազդան քաղաքի վարչական տարածքում և էապես կնպաստի հատկապես քաղաքային համայնքերի աղբահանության աշխատանքները պատշաճ մակարդակով կազմակերպելու համար:

Հաշվի առնելով, որ մարզի ջրային ավազանների աղտոտվածության հիմնական աղբյուրը կենցաղային կեղտաջրերն են, անհրաժեշտ է ապահովել կեղտաջրերի մաքրման կենսաբանական ինքնավար / լոկալ/ համակարգերի կիրառումը: Մաքրման կայանների բացակայության պատճառով կեղտաջրերը վերջնականապես լցվում են գետերը և Աղբարայի ջրամբար: Հատկապես մտահոգիչ է Քաղսիի նախկին մաքրման կայանի տեղում նոր մաքրման կայանի կառուցումը, որը հատկապես կարևորվում է Հրազդանի տարածաշրջանի համար:

Մարզը հարուստ է օգտակար հանածոների՝ նեֆելինային սիենիտների, ոսկու, պղինձ-մոլիբդենի, բազալտի, լիթոիդային պեմզայի, մարմարի, գրանիտի, հրաբխային խարամի, հանքավայրերով: 2016 թվականի դրությամբ մարզում տրվել են 60 հանքավայրերի շահագործման թույլտվություններ, որոնք պատկանում են 47 տնտեսվարող սուբյեկտների և գտնվում են 20 համայքների վարչական տարածքներում: Դրանցից տարվա ընթացքում շահագործվել են 33-ը, 11-ը չեն շահագործվում պահանջարկ և հնարավորություններ չունենալու պատճառով, իսկ մնացածը գտնվում են փաստաթղթային ձևակերպումների փուլում: Առկա են հանքային ջրերի 3 խոշոր հանքավայրեր՝ Բջնի, Արզնի և Հանքավան, որոնցից առաջին երկուսը շահագործվում են թերբեռնվածությամբ: Քիչ չեն նաև քաղցրահամ ջրերի /Կաթնաղբյուր, Գառնի, Արզական, Մաքրավան, Գյումուշ, Ալափարս, Նուռնուս/ աղբյուրները, որոնցից օգտվում են ինչպես մարզի բնակավայրերը, այնպես էլ Երևան քաղաքը: Ըստ գույքագրման տվյալների մարզում առկա են 440 բնաղբյուրներ և 200-ից ավելի խորքային հորեր: Մարզը մեծ ներուժ ունի քաղցրահամ ջրեր շշալցելու նպատակներով օգտագործելու և համաշխարհային շուկա դուրս գալու համար:

Կոտայքի մարզում անտառները զբաղեցնում են տարածքի շուրջ 11 տոկոսը / 22761 հա/, որը համեմատական է հանրապետության միջինին: Դրանք ունեն հողապաշտպան, ջրապաշտպան և կլիմայակարգավորիչ նշանակություն, ինչպես նաև աչքի են ընկնում հարուստ կենսաբազմազանությամբ, որը մեծ հնարավորություններ է տալիս արտադրություններ հիմնելու համար: Մարզի անտառները լուրջ բարեփոխումների կարիք ունեն, պետական բյուջեյից տրվող սահմանափակ միջոցները հնարավորություն չեն տալիս բավարար մակարդակով կատարելու անտառվերականգնկամ աշխատանքներ:

2016 թվականի ընթացքում պետ բյուջեի միջոցներով Հրազդանի անտառային տարածքներում 1553 հա-ի վրա կազմակերպվել է ավիացիոն պայքար անտառի վնասատուների և հիվսնդությունների դեմ և 100 հա-ի վրա իրականացվել է բնաշվային վերաճի օժանդակման աշխատանքներ, որը էականորեն կնպաստի նախկինում հատված տարածքներում անտառի արագ վերականգնմանը: Վերջին տարիներին իրականացված հետևողական աշխատանքների շնորհիվ կտրուկ նվազել են ապօրինի անտառահատումները, տարվա ընթացքում արձանագրվել են ընդամենը 2 անտառխախտման դեպքեր, հատվել են թվով 21 ծառեր:

Քաղաքաշինության բնագավառ

2016 թվականին պետական բյուջեից ՀՀ Կոտայքի մարզպետարանի պատվիրատվությամբ հիմնանորոգվող <<ք.Նոր Հաճնի թիվ 3 դպրոցի վերանորոգում>> կրթական օբյեկտի շինարարության համար բաց ընթացակարգով մրցույթի է ներկայացվել 55.600 մլն. դրամ գումար: Մրցույթի արդյունքում շինարարության գումարը կազմել է 46.878մլն. դրամ, տնտեսվել է 8.722 մլն. դրամ:

Կատարված աշխատանքների համառոտագիրը

Հ/Հ	Բովանդակություն	Քանակ
1	2	3
1	Մարզպետարան իրազեկված շինարարության թույլտվություն.	347
	այդ թվում -անհատական բնակելի տներ	172
	-հասարակական սպասարկման օբյեկտներ	24
	-այլ օբյեկտներ /տնտ.շինություններ, ավտոտնակ,պահեստ,պարիսպ,հանգստի գոտի/	151

Մարզի տարածքում կատարված աշխատանքների ընթացքը նախորդ տարվա համեմատությամբ երևում է հետևյալ աղյուսակում

Հ/Հ	Անվանում	2015թվ.	2016 թվ.
1.	Մարզպետարան իրազեկված շինարարության թույլտվություններ	581	347
2.	Շինարարության ավարտի փաստագրման ավարտական ակտեր	106	118
3.	Շինարարության քանդման թույլտվություններ	10	13

2016 թվականի ընթացքում վարչությանը հասցեագրվել է 1520 գրություններ և 162 դիմում բողոքներ, որոնց տրվել է համապատասխան ընթացք:

	2015թ.	2016թ.
Գրություններ	1470	1520
Դիմում-բողոքներ	101	162

Քաղաքաշինության ոլորտում առաջնահերթ լուծում պահանջող խնդիրներից կարևորվում են հետևյալները.

մարզի 23 համայնքներ ունեն գլխավոր հատակագծեր, 10 համայնքների գլխավոր հատակագծերը մշակման փուլում են:

Առաջնահերթ լուծում պահանջվող խնդիրներից է մարզի 34 համայնքների գլխավոր հատակագծերի մշակումը:

Բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բնագավառ

2016 թվականի ընթացքում մշտապես աշխատանքներ են տարվել ՀՀ գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի, <<Հայջրմուղկոյուղի>> ՓԲԸ-ի, <<Երևան Ջուր>> ՓԲԸ-ի և համայնքների հետ՝ մարզի ջրամատակարարման համակարգում առկա խնդիրների կարգավորման ուղղությամբ:

2016 թվականին մասնակցել ենք <<Ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի>> վարձակալության հանձնման համար անհրաժեշտ ու պահանջվող փաստաթղթերի հավաքագրման և կազմման աշխատանքներին:

2016 թվականին ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին Կոտայքի մարզպետարանի պատվիրատվությամբ Հրազդան համայնքում <<Հրազդան համայնքի որոշ բարձրահարկ շենքերի վերելակների վերանորոգման աշխատանքներ>> ծրագրի շրջանակում բանակցային ընթացակարգով հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով մրցույթի է ներկայացվել 29,221 մլն. դրամ գումարի աշխատանքներ: Մրցույթի արդյունքում վերանորոգման աշխատանքների գումարը կազմել է 29,141 մլն.դրամ, որով վերանորոգվել են թվով 17 վերելակներ:

Մասնակցել ենք Հրազդան քաղաքում Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ կենցաղային թափոնների կառավարում ծրագրի իրականացման աշխատանքների խորհրդատուների ընտրության մրցութային հանձնաժողովի աշխատանքներին:

2016 թվականին ՀՀ Կոտայքի մարզպետի որոշումներով, աշխատանքային խմբի հետ, համաձայն ՀՀ քաղաքաշինության նախարարի 2013 թվականի դեկտեմբերի 4-ի N 371-Ն հրամանի հարցաշարի, ՀՀ տրածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 29 դեկտեմբերի 2015 թվականի N 1381-Ա հրամանի՝ քաղաքաշինության, տրանսպորտի և կապի բնագավառներում վարչական հսկողություն է իրականացվել մարզի 3 քաղաքային և 20 գյուղական համայնքներում:

Հաշվետու ժամանակահատվածում բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բաժնին է հասցեագրվել 680 գրություններ և 73 դիմում-բողոքներ քաղաքացիների կողմից, որոնց սահմանված ժամկետներում տրվել են պատասխաններ:

2016 թվականին մարզի համայնքների կողմից բնակարանային և ենթակառուցվածքների գորունեության բնագավառում կատարվել են հետևյալ աշխատանքները.

- բազմաբնակարան շենքերի սպասարկում և պահպանում՝ Չարենցավան և Գետարգել համայնքներում – 14,339 մլն դրամի չափով,
- ջրամատակարարման և ջրահեռացման բնագավառում՝ Աբովյան, Նոր Հաճն, Ջովաշեն, Հանքավան և Ձրվեժ համայնքներում կատարվել են 10,646 մլն. դրամի չափով,
- փողոցների լուսավորություն՝ Հրազդան, Արամուս, Թեղենիք, Հանքավան, Սոլակ և Վերին Պտղնի համայնքներում 10.354 մլն. դրամի չափով,
- գազիֆիկացման բնագավառում՝ Պռոշյան համայնք – 3,875 մլն.դրամի չափով:

Ջովաշեն համայնքի ու սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ծրագրի կողմից կատարվել են համայնքի խմելու ջրի ՕԿՋ-ի կառուցման աշխատանքներ – 849,8 հազ. դրամի չափով:

Բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության ոլորտում առաջնահերթ լուծում պահանջող խնդիրներից կարևորվում են հետևյալները.

-ջրամատակարարման և ջրահեռացման ներհամայնքային ցանցի մաշվածությունը,

-կոյուղու մաքրման կայանների բացակայությունը,

-գերեզմանատների հատակագծերի բացակայությունը,

-բազմաբնակարան բնակելի շենքերի վերելակների, տանիքների և կոմունիկացիաների վերանորոգումը:

Տրանսպորտի և ճանապարհաշինության բնագավառ

Մարզում ընդհանուր օգտագործման պետական ավտոճանապարհային ցանցի երկարությունը կազմում է 581.28 կմ, որից միջպետական նշանակության՝ 56.18 կմ, հանրապետական նշանակության 274.8կմ և տեղական նշանակության 250.3կմ:

ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի միջոցներից մարզի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ամառային և ձմեռային ընթացիկ պահպանության աշխատանքների իրականացման նպատակով նախատեսվել էր 480,0 մլն դրամ, այդ թվում ամառային պահպանման համար 373.0մլն. և ձմեռային պահպանման համար 107.0մլն դրամ: Նշված ծրագրի շրջանակներում ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության պատվիրատվությամբ իրականացվել է ճանապարհների 332.8 կմ ձմեռային և 282.5 կմ ամառային ընթացիկ պահպանման աշխատանքներ: ՀՀ Կոտայքի մարզային /տեղական/ նշանակության ավտոճանապարհների ամառային և ձմեռային ընթացիկ պահպանման նպատակով 2016 թվականին ՀՀ պետական բյուջեով հատկացվել է 89,3 մլն դրամ: Հատկացված գումարի շրջանակներում հնարավոր է եղել Կոտայքի մարզպետարանի պատվիրատվությամբ իրականացնել՝ 79.3 կմ ամառային և 119.0 կմ ձմեռային ընթացիկ պահպանման աշխատանքներ:

Մարզի համայնքներում առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների կարգավորման նպատակով 2016 թվականին ՀՀ պետական բյուջեից հատկացվել է 120.0մլն. դրամ որից 114.8 մլն. դրամով իրականացվել է Հրազդան համայնքի մի շարք բազմաբնակարան շենքերի բակերի ասֆալտապատման աշխատանքներ: Տնտեսվել է 5.2 մլն. դրամ :

2016 թվականին ՀՀ պետական բյուջեի միջոցներով իրականացվել են.

- Հ28 Ձրառատ-Մեղրաձոր-Հանքավան ճանապարհի 8-րդ և 26-րդ կմ-ի հողային պաստառի վերանորոգում - 22.0 մլն. դրամ և 1-ին կմ-ի վթարված կամրջի վերանորոգում – 20.0մլն. դրամ,

-Մ4 Երևան-Սևան-Իջևան մայրուղու 43-րդ կմ-ի վթարված կամրջի հիմնանորոգում – 55.0 մլն դրամ,

- << Կենսական նշանակության ճանապարհացանցի բարելավում>> վարկային ծրագրով ընթացիկ տարում սկսվել և 2017թ-ին կավարտվեն Հ1–Հրազդան-Հ55 ճանապարհի 3կմ. հատվածի հիմնանորոգումը՝ 250,0 մլն. դրամով և Հ6-Նոր Գեղի-Արգել-Արզական-Հրազդան ավտոճանապարհի 13 կմ հատվածի հիմնանորոգումը՝ 1,6 մլրդ. դրամով:

Ընդհանուր առմամբ 2016 թվականին մարզում ճանապարհաշինության և ճանապարհների պահպանման նպատակով աշխատանքներ են իրականացվել հետևյալ ուղղություններով.

Հանրապետական ճանապարհների պահպանում	***480,0 մլն. դրամ***
Մարզային ճանապարհների պահպանում	***89,3 մլն. դրամ***
Համայնքներում առաջնահերթ խնդիրների կարգավորում	***223,0 մլն. դրամ***
Միջպետական և հանրապետական ճանապարհների հիմնանորոգում	***1,9 մլրդ. դրամ***
Ընդհանուրը	***2,7 մլրդ. դրամ***

Մարզի բնակավայրերը այլ մարզերի հետ կապվում են գործող 17 միջմարզային երթուղիների միջոցով, որոնց աշխատանքները կազմակերպում է ՀՀ տրանսպորտի , կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը:

Տրանսպորտի բնագավառում մարզպետարանի կողմից կազմակերպվել են ներմարզային 36 ավտոբուսային և միկրոավտոբուսային երթուղիներ, իսկ մարզի 3 քաղաքներում (Հրազդան, Աբովյան, Եղվարդ) գործում են ներհամայնքային 6 երթուղիներ:

Մարզի բնակավայրերը 98 % -ով ապահովված են ինտերնետ ծածկույթով: Ինտերնետի որակը հիմնականում բավարար է:

Մինչև 1000 բնակիչ ունեցող գյուղական համայնքներում անլար (Wi- Fi) ինտերնետի հասանելության ծրագրի շրջանակներում մարզի 21 գյուղական համայնքներում տեղադրվել և նվիրատվության կարգով նրանց են հանձնվել անլար ինտերնետ սարքավորումներ՝ ծառայությունից անվճար օգտվելու համար:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐ

Հաշվետու տարվա ընթացքում իրականացվել են մարզպետարանի աշխատանքային ծրագրերի շրջանակներում կազմակերպվող միջոցառումների, իրադարձությունների, աշխատանքային խորհրդակցությունների, քննարկումների, հանդիպումների, մարզպետի այցելությունների և այլ համանման ձեռնարկների լուսաբանման աշխատանքները (շուրջ 120 թողարկում):

2016 թվականին ծավալուն աշխատանքներ են կազմակերպվել մարզպետարանի գործունեության հրապարակայնությունն ապահովելու և մարզային գործընթացների վերաբերյալ հանրային իրազեկվածության աստիճանը բարձրացնելու ուղղությամբ:

Պաշտոնական կայքի <<Նորություններ>> բաժնում տեղադրվող հաղորդագրություններն ուղեկցել են մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի կողմից պատրաստվող տեսանյութերով:

Կազմակերպվել են մարզպետարանի պաշտոնական կայքի տեղեկատվական համալրման աշխատանքները, պարբերաբար խմբագրվել են կայքի տարբեր ենթահամակարգերը և համալրվել անհրաժեշտ նոր տեղեկատվությամբ:

Մարզպետարանի պաշտոնական կայքում տեղադրվել են մարզպետարանի աշխատանքային ծրագրերը, տարեկան և ընթացիկ հաշվետվությունները, մարզպետի, համայնքների ղեկավարների և ավագանու որոշումները:

ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարարության կողմից մշակված մեթոդաբանության շրջանակներում իրականացվել են մարզի խորհրդի նիստերի լուսաբանման աշխատանքները (թվով 4 մամուլի հաղորդագրություն):

Շարունակաբար ուսումնասիրվել և վերլուծության են ենթարկվել մարզի համայնքներում առկա հանրային իրազեկման միջոցները: Իրականացվել է մարզի համայնքների կայքերի մոնիտորինգ, որի հիման վրա կատարվել է վերլուծություն: Հիշյալ վերլուծության, համայնքների ղեկավարների աշխատակազմերի հետ համագործակցության և մարզպետարանի կողմից վերջիններիս համապատասխան մեթոդական ցուցումներ տրամադրելու արդյունքում զգալիորեն բարելավվել են համայնքային կայքերի աշխատանքները:

Ընդհանուր առմամբ 2016 թվականին, միջին ամսեկան ցուցանիշով, մարզպետարանի պաշտոնական կայքի այցելուների թիվը աճել է գրեթե 30 %-ով:

ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ

Համաձայն 2016թ-ի ներքին աուդիտի տարեկան ծրագրի իրականացվել է թվով 27 աուդիտ, որից 4-ը՝ մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումներում, 3-ը՝ 100% պետական բաժնեմաս ունեցող ընկերություններում, 20-ը՝ պետական ոչ առևտրային կազմակերպություններում:

Աուդիտի արդյունքներով արձանագրված թերությունները, բացթողումները և անհամապատասխանության դեպքերը քննարկվել են, որի հիման վրա տրվել են համապատասխան

հանձնարարականներ (գործողությունների ծրագիր)՝ դրանց վերացման և հետագա գործունեությունը բարելավվելու ուղղությամբ:

2016 թվականին իրականացված աուդիտների արդյունքներով թվով 10 ՊՈԱԿ-ների ֆինանսավորման ծավալներից նվազեցվել է ի օգուտ պետական բյուջեի 2 327 597 դրամ:

ՓԱՍՏԱԹՂԹԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ, ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Փաստաթղթաշրջանառություն

2016թ.հունվարի 1-ից դեկտեմբերի 29-ը ընկած ժամանակահատվածում մուտքագրվել է 2020 դիմումներ քաղաքացիներից, որոնք խմբավորվում են ըստ հարցի բնույթի՝

Ֆինանսական	-1082
Առողջապահության	- 375
Երեխայի վկայագրելու, գիշերօթիկ հաստատություն ընդունվելու և դուրս գրելու, որդեգրման	- 165
Տրանսպորտ և կապ	-5
Գյուղատնտեսական և հողաշինական	- 36
Բնակարանային	- 67
ՌԴ մուտքի թույլտվության միջնորդություն	- 180
Այլ հարցեր	- 110

Քաղաքացիների ընդունելություն

2016 թ. հաստատված ժամանակացույցի համաձայն մարզի տարածաշրջաններում մարզպետի կողմից կազմակերպված ընդունելությանը մասնակցել են 254 քաղաքացի, նախորդ տարվա 223-ի դիմաց:

ԿԱԴՐԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Մարզպետարան

ՀՀ Կոտայքի մարզպետի կողմից ընդունվել են 294 որոշումներ, 211 կարգադրություններ, իսկ աշխատակազմի ղեկավարի կողմից՝ 334 հրամաններ:

ՀՀ Կոտայքի մարզպետարանի 2016 թվականի հաստիքացուցակում առկա են 137 հաստիքներ, որից 9-ը՝ հայեցողական պաշտոններ են, 120-ը քաղաքացիական ծառայության պաշտոններ և 8-ը տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի պաշտոններ: Պաշտոնների են նշանակվել 6 անձ, որից 2-ը՝ հայեցողական և 4-ը տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի պաշտոններում: Պաշտոններից ազատվել են 4 անձ, որից 1-ը՝ հայեցողական և 3-ը տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի պաշտոններից:

Քաղաքացիական ծառայություն

ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկում առկա են քաղաքացիական ծառայության 120 պաշտոններ, որից 2-ը թափուր են: Կայացել են քաղաքացիական ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար 9 մրցույթներ, որից 4-ը՝ ՀՀ ՔԾԽ-ում: Պաշտոնների են նշանակվել 47 քաղաքացիական ծառայողներ, որից՝ 8-ը մրցույթով, 39-ը արտամրցութային կարգով: 3 քաղաքացիական ծառայողի պաշտոնավարման ժամկետը

երկարաձգվել է մեկ տարի ժամկետով: Պաշտոններից ազատվել են 42 քաղաքացիական ծառայողներ, որից 2-ը անձնական դիմումի, 1-ը՝ <<Քաղաքացիական ծառայության մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի <<ժգ>> կետի (քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու՝ սույն օրենքով սահմանված առավելագույն տարիքը լրանալը, իսկ աշխատակազմի ղեկավարի պաշտոնն զբաղեցնելու՝ սույն օրենքով սահմանված ժամկետը լրանալը) և 39-ը՝ <<Քաղաքացիական ծառայության մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի <<իբ>> կետի (սույն օրենքի 122-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված արտամրցութային կարգով քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնին նշանակելը) համաձայն: Ատեստավորվել են 32 քաղաքացիական ծառայողներ, վերապատրաստվել՝ 41-ը: Քաղաքացիական ծառայության դասային աստիճաններ են շնորհվել 21 քաղաքացիական ծառայողների, իսկ առավելագույն դասային աստիճան՝ 6-ի: 13 քաղաքացիական ծառայողներ ենթարկվել են կարգապահական պատասխանատվության, որից 6-ը <<նախազգուշացում>>, 3-ը <<նկատողություն>> և 4-ը <<խիստ նկատողություն>> կարգապահական տույժերի: Քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնելու համար կնքվել է 5 ժամկետային աշխատանքային պայմանագիր, լուծվել է 7-ը, որից 2-ը՝ 2015 թվականին կնքված:

<u>Առողջապահական բաժնետիրական ընկերություններ և պետական ոչ առևտրային կազմակերպություններ</u>

ՀՀ Կոտայքի մարզպետարանի ենթակայությամբ գործում են 8 առողջապահական ընկերություններ և 27 առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպություններ: Թափուր են 10 առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների պաշտոններ: Կայացել է 1 առողջապահական կազմակերպության տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ: Պաշտոնի նշանակվել է 1 առողջապահական կազմակերպության տնօրեն:

<u>Կրթական, մշակութային և մարզական պետական ոչ առևտրային կազմակերպություններ</u>

՛ՀՀ Կոտայքի մարզպետարանի ենթակայությամբ գործում են 94 պետական ոչ առևտրային կազմակերպություններ, որից՝ 1 մշակույթի կենտրոն, 2 մարզադպրոցներ, 59 միջնակարգ դպրոցներ, 31 հիմնական դպրոցներ և 1 հատուկ (օժանդակ) դպրոց: Թափուր է 27 պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոն: Նշանակվել են 15 պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրեններ: Ազատվել է 38 պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն, որից 37-ը՝ աշխատանքային պայմանագրերի գործողության ժամկետները լրանալու կապակցությամբ, իսկ 1 պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն՝ օրենքով սահմանված տնօրենի պաշտոնավարման առավելագույն տարիքը (65 տարեկան) լրանալու կապակցությամբ: 10 պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրեններ ենթարկվել են կարգապահական պատասխանատվության, որից 4-ը՝ <<Նկատողություն>>, իսկ 6-ը՝ <<Խիստ նկատողություն>> կարգապահական տույժերի:

ՄԱՐԶՊԵՏ **Կ. ԳՈՒԼՈՅԱՆ**